նոր մանրամասնութիւններով։ Նորա գործը լոյս է տեսել հետեւեալ տիտղոսի տակ՝ Ibn-Wādhih Al-Jâqubī Historiae, 1. 2. Ed. M. Th. Houtsma. Lugduni, 1883.

Այստեղ առաջ բերուած հատուածներում կարեւոր համարեցի ի բաց թողնել այն ամենը, ինչ որ անմիջական կապ չունի Հայաստանի պատմութեան հետ, բացի այն հատուկոտոր տեղեկութիւններից, որոնք որոշ չափով կը բնորոշեն երկրիս քաղաքական-աշխարհագրական դիրքը շրջակայ իշխանութեանց վերաբերմամբ։

Արդաշիր թագաւորը պատերազմեցաւ պարսից արքայ Արտաւանի հետ, սպանեց նորան եւ կոչուեցաւ Արդաշիր Շահանշահ։ Ապանա արշաւեց Միջագետք, Հայաստան եւ Ատրպատական։

Երբ Փաղեղ (որդի Աբիրի, որդի Արփաքսատի, որդի Սեմի, որդի Նոյի) բաժանեց երկիրը Նոյի սերնդի մէջ, Ամուրի (որդի Տուրիլի, որդի Ցաբեթի, որդի Նոյի) սերունդը դաղթեց դէպի Հիւսիս-արեւելք. այստեղ բաժանուեցաւ Նաուամայի ցեղը, (դնաց) դէպի հիւսիս եւ տարածուեցաւ (զանազան երկրներում), հիմնելով բազմաթիւ տէրութիւններ, որոնք են՝ Բորջան[1], Դիլեմ, Տաբար[2], Թայլիսան, Գիլան, Գիլան, Ալանք, Խազարը, Ծովդէք եւ Հայք։ Խազարը կ'իշխէին Հայոց դաւառների վերայ. նոցա թագաւորը խաքան կը կոչուէր, որի աստիկանը՝ Եգիդ Վաղարշ (Բալաշ) անուամբ՝ կը կառավարէր Աղուանք, Վիրք, Վասպուրական եւ Սիսական երկրները, որոնք Զորրորդ Հայք կ'անուանուէին եւ որս մի ժամանակ նուաճած էր Կաւադ պարսից թագաւորը։ Անու-

---

1 De Goje (Նոյնտեղ) կը թարգմանէ "բուլգարը"։

2 Տաբարիստան?